1101/ 02499
16 մարտի, 2016թ.

ԵՄ-ում ՀՀ ներկայացուցչություն/ Բրյուսել
Հանձնարարական/ծառայողական

2015թ. սեպտեմբերի 16-ին ընդունվել է Եվրոպայի Խորհուրդ-Հայաստան 2015-2018թթ. գործողությունների ծրագիրը, որը եկավ փոխարինելու 2012-2014թթ. համանման ծրագրին:

ԵԽ-Հայաստան գործուղությունների ծրագիրը Հայաստանում մարդու իրավունքների, ժողովրդավարության ու արդարադատության ոլորտներում բարեփոխումներին աջակցող կարևորագույն ծրագրերից է: Այս ոլորտներում համալիր փոփոխությունների իրականացման կապակցությամբ մեծապես կարևորվում է գործողությունների ծրագրում մատնանշված միջոցառումների համար ֆինանսական աղբյուրների հայթայթումը:

Եվրոպական Միությունը ժողովրդավարության ու մարդու իրավունքների ոլորտներում բարեփոխումներին ուղղված ծրագրերը ֆինանսավորող ավանդական դոնորներից է և ներկայումս ֆինանսավորում է Հայաստանում իրականացվող բարեփոխումները ԵՄ-ԵԽ ծրագրային համագործակցության շրջանակներում (EU-CoE Programmatic Cooperation Framework): Նշենք նաև, որ դեռևս ընթացքում է 2012-2014թթ. գործողությունների ծրագրի շրջանակներում մեկնարկած «Հայաստանի արդարադատության համակարգի անկախության, պրոֆեսիոնալիզմի և հաշվետվողականության ամրապնդումը» ծրագիրը, որը նույնպես համաֆինանսավորվում է ԵՄ ու ԵԽ կողմից:

Ըստ այդմ, խնդրում ենք աշխատանք իրականացնել Եվրոպական Միության համապատասխան կառույցների հետ՝ ստանալու հավելյալ ֆինանսավորում 2015-2018թթ. գործուղությունների ծրագրի իրականացման համար: Այս կապակցությամբ խնդրում ենք մատնանշել Հայաստանում իրականացվող բարեփոխումներին ԵՄ աջակցության կարևորությունը, ԵԽ-Հայաստան 2012-2014թթ. գործողությունների ծրագրին ու ծրագրային համագործակության շրջանակներում արդեն իսկ տրամադրված աջակցությունը, այս ծրագրերի հաջողությունը և բարեփոխումների շարունակականության կարևորությունը: Տեղեկացնում ենք նաև, որ գործողությունների ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումներն իրականացնելու համար պահանջվող գումարը կազմում է 9.650.000 եվրո:

Կից ներկայացնում ենք ԵԽ-Հայաստան 2012-2014թթ. գործողությունների ծրագիրը, դրա վերաբերյալ վերջնական զեկույցը, ինչպես նաև ԵԽ-Հայաստան 2015-2018թթ. գործողությունների ծրագիրը:

Առդիր՝ 93 էջ:

Վերջ: